շահաբեր՝ յօգուտ միաբանութեանս և աշխ. լուսակերտ Մայր Աթոռս սուրբ Էջմիածին՝ ըստ մեծութեան անուան՝ ջուներ և զիտառաւորութիւնս. իսկ այժմ Զեօք՝ զերթ հասն ի հանդերձս ոսկեհուռն պերճապաճոյճ պճնազարդեալ կայ. ցարդ խաւարամած տգիտութիւնն՝ պաշարեալ էր զմիտս, բայց այժմ յարև գիտութեան կայտռին մանկտիք Հայկազանցս. և որով անիւ կենացս բոլորեցունց հետզհետէ յաջողակ կոյս առնու պտոյտ.

Կե՛ցցէ Վեհափառութիւն Ձեր. քանզի ի փոքու ժամանակի նոր ի նորոյ զանազան շինութեամբք շքեղացուցեր Աթոռս բովանդակ. պարգևելով մեզ նոր իմն կենդանութիւն՝ ճգնիք ի կատար հասուցանել զերանութիւն կենաց մերոց. Եթէ գերազոն Քահանայապետիդ միշտ և յամենայն դէպս աջակից գտանիցի հայրենասէր ազգ մեր՝ չխնայելոց ի եթէ ասացից. յայնժամ զոսկեդէն երջանիկ դարուն, և զԱրշակունեաց փայլեալ թագաւորութեանն զբարիվայել չութիւն ի մեզ վերափոխեալ տեսցուք՝ որով և յերանութեան վայելիցուք զկեանս մեր, հոգի առնելով ի յոգնատեսակ վշտաց և ի նեղսակրութեանց.

Հապա Քահանայապետ մեծ. մաղթիցուք յԱտուծոյ տալ Վեհ օծութեան Ձերում զյաջողութիւն՝ առ ի կատարել զամենայն գործս՝ որոց և ձեռնամուխ լինիջիք և միանգամայն առնել զՁեզ օրինակ արժանագով՝ յետագայից յաջորդաց քոց քահանայապետաց՝ որք և ամենեքին ցանկասցին զքոյին զնմանութիւն յանձին իւրեանց բերել. ամենեքին ցանկասցին ի ձեռն մեծապանչ օրինակի հմուտ վարչութեան Ձերոյ՝ յանդորրու պահել զազգս. Վասն որոյ զամենայն մտադրութիւն Ձեր՝ և բաղձանք ազգիս առ ի կատար հանել, յօգուտ և ի պարծանս Հայրենեաց՝ կեցցէ կեցցէ Վեհափառութիւն Ձեր յամար ամն.

Գ՝ԷՂԲՈՐ Ա՝ԼՅԱՐԱՆԸ Ա՝ՍՊԱՐԵՍԵԱՆ.

(Ի Սեղանապետն)

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ,

Ի սերկեան տօնելի աւուրս մեծի՝ ստիպիմ ի սիրոյ սրտիս գեղեցիկ բաղձանաց մխել յայս հանդէս նուիրական, և խորհրդազդաց իմն մտօք՝ ընդ ձեռն արժանապատիւ գովեստից և ներբողենեաց դրուատել զնշանաւոր Տարեդարձ Սրբազան Օծման ընդհանրական Գլխոյդ ընտրելոյ Հայկազեան սերնդոց, որոյ բարեդէպ հոլովումն՝ այն գերբնական պարգևք են և շնորհ երկնաւորն տեսչութեան, և ցնծալիր զուարթացուցիչ հնչումն աւետաւորի, որ ազդէ ի մեզ զուրախութիւնն հոգևոր, զուրախութիւնն կատարեալ. Այսօր առատապէս ծաւալին ի սիրտս և ի հոգիս ոչ միայն միաբանական ուխտի Հոգևորականացս դասուց, ոչ միայն պատուամեծար աստիճանաւորաց և ժողովրդականաց համախմբելոց ի տեղւոջս յայսմիկ, ապաքէն և համայն սերնդոց Ցարեթեան տոհմիս, որք թէև տարակայութեամբ բացակայեալ ի մէջ՝ սակայն զնոյն հոգևորն ուրախութիւն ծայրալիր ցնծութեամբ զգան ի սիրտս իւրեանց և ի հոգիս. Այսօր հուժկու գաւազանին ծաղկելոյ փառքն, զոգոյէս զընթացս եթերական բնութեան յեղաշրջեալ ի նորասքանչ և յանսովոր խնդութիւնս, ի քիմն անմխիթար որդւոց փառակորոյս Մօրն Հայաստանի քաղցրացուցանելով՝ զնոր իմն և զօտար ուրախութիւնս տայ ազգումն հոգևոր բարիզգացութեամբ երգել ի բարձունս ըստ մանկանց Սաղիմայ զովսաննայն օրհնութեան. և փոխանակ հնոցն արմատենեաց և ոստոցն ձիթենեաց՝ զսիրտ մեր խոնարհ, զսիրտ մեր տիրասէր բանալ Վեհիդ ի դէմս. Այս փառաւոր յիշատակ Օծման Տարեդարձի Սրբազնասուրբ Հօրդ շքեղաշուք և պանծալիս յօրինեալ՝ ոչ միայն ի խնդութիւն հոգևոր կացուցանէ զհամագումար հանդիսականս, ապաքէն և ի տեսարան շնաշխարհիկ հանդիսի առմատուցանելով զՎեհանձնեայ գործս Ձեր առաքինիս, և զազգասիրական զջանս և զփոյթս շահաբերս, որք արդարև հոգևոր սպեղանիք են հարուածեալ սրտի Հայաստան աշխարհի, տայ հարազատ որդւոց նորին վերստին ի յոյս

նոր և գեղեցիկ, ի յոյս մեծ և գերազանց, ի յոյս առաւելագոյն բարեաց փառաւորութեանցն, անբաւ ուրախութեամբ սրտից խրախուսանօք թեւակոխել, և զազգասիրական վաստակս մեծի Հայրապետիդ երախտագէտ հոգւով ի փող աւագափող ներբողինել։ Ահա այսօր ամբարձեալ Վեհիդ ի պատկառելի գահ Հայրապետութեան, և ի բարեյաջող շրջանս Չորրորդ Տարեդարձի նուիրական սուրբ Օծմանդ ժամանեալ՝ ազգասիրական ներկայ գործք Ձեր և ջանք ի մեծամեծ բարիս և ի շահեկան պտուղս վաստակոց եղերելով՝ զապառնեացն՝ սիրելի ազգայնոց մերոց, զհաստատուն յոյս և զակնկալութիւն վսեմախոհ խորհրդովք տան պսակել պանծանօք, զի բնական են այսոքիկ շարժառիթք, զի չիք երբէք յղութիւն առանց ցաւակցական երկանց, և չիք կասկածելի երկունք առանց ուրախական ծննդեան, եթէ ներքին զգացմամբ հոգւոյ՝ ճշմարտութեամբ հայեսցուք յայս նշան նշանաւոր։

Ապա ուրեմն զի՞նչ արդեօք մնայ մեզ համախմբելոցս աստանօր կատարել՝ ո՛ պատուարժան Տնաքը հանդիսականք, եթէ ո՛չ փառս յաւերժական յարդանաց մատուցանելով Արժանաւոր Գլխոյ Հայկաղեանս սերնդոց՝ փութալ ի շնորհաւորութիւն նշանաւոր Տարեդարձի Սրբազան Օծման աղդախնամ Այցելուի մերում, և ի նուիրումն սրտից մերոց և հոգւոց եռանդուն մաղթանաց առ բարձրեալն Աստուած, և կոչել համասիրտ ձայնարկութեամբ, Թագաւորդ երկնաւոր Տէր Քրիստոս, զարժանաժառանգ սրբոյ Գահիս և մեծի տանս Թորգոմեան զՏէր Գէորգ Դ զՍրբազնագոյն և զԱեհափառ Հայրապետն մեր օրհնեա՛ և պահպանեա՛ ընդ հովանաւորութեամբ Ամենազօր Աջոյդ բարձրելոյ, անփորձ և անսասան կենաց, բարերջանիկ և խաղաղաւէտ աւուրքիք, իմաստուն և պայծառ մտաց և հոգւով, հսկող և խոհական կառավարութեամբք ի յաւերժական ուրախութիւնս և ի պարծանս ընդհանրութեան Ազգիս Հայոց։

Յարո-Ի-Ն Տ. Լուսայեանց.

Ի ՏՕՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

(Ի Մաղնան)

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ,

Անեղն անսահման, որոյ Աթոռ զերկինս և պատուանդան ոտից նորա զերկիր հոգւովն մեզ քարոզէ Մարգարէն՝ ի ցոյց անհուն մարդասիրութեան իւրոյ զեր զարեգակնաձաձանչ լուսով ընտրեաց զտեղի բնակութեան իւրոյ ի Հայաստան աշխարհի, զտեղի Մօրս լուսոյ նորոյս սիոնի, յորում սահմանափակի Անսահմանն ի սէր արարչական գթութեան առ ազգս համօրէն ազանց և առ Թորգոմեանս, յայտնեալ զփառս Աստուածութեան իւրոյ և զմեծ վայելչութիւն սրբութեան Տաճարիս, զոր ո՛չ եթէ Իսկզիէլ ոմն արար և կառոյց, որպէս զտապանակն ուխտի, և կամ Ծերունին Նոյ որպէս զտապանն ապրեցուցիչ ընդ հրամանին՝ օրինակացն խկամուտ լինելով, այլ Ծոցածին Ծնունդն խսկակից Հօր և փառակից սուրբ Հոգւոյն իջեալ յերկնից ինքնին ճարտարապետեալ անդրդուելի հիմանս սրբոյ Եկեղեցւոյս այսորիկ, զոր վասն Էջմիածին անուանեցաւ. որ ի տիպ կարակնաձև լուսոյ եցոյց զսա բնակարան ամենասուրբ եռանձնեայ Աստուածութեան և մակաղեալ բանաւոր հօտին իւրոյ գնեցելոյ արեամբն անպարտականաւ ի ձեռն զերերջանիկ պարթևի եռամեծին Գրիգորի սքանչելի սուրբ նահատակին իւրոյ, որ նովին գերահրաշ տեսլեամբ ի հոգեռանդն սէր վառեալ ասէ ցարքայն հրաշիւք փրկեալն և հաւատացեալն ցսուրբն Տրդատ «Եկայք շինեսցուք սուրբ զեռարանն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։ Զոր և Աստուածախօս քնարն Դաւիթ կանխատեսեալ և ի սէր նորին համակեալ ասէր. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ և զտեղի յայկի փառաց քոց։

Ո՞վ մեծի շնորհացն և պարգևացն Աստուծոյ. զոր ընկալեալ մեծ Քահանայապետն և Աստուածառաք Լուսաւորիչն մեր, ի տրիտուր երկուտասան